

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերծագործական համայնքներ
ու առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը առևտրական համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

AM-1878

Մ. ՅՈՒՐԻՆ

ԸՆԿԵՐ ՎԱԼՅԱ




ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ. ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿԳՈՒԹՅՈՒՆ. ՄՈՍԿՎԱ, 1927



Am-1878

Մ. ՅՈՒՐԻՆ




891.71

Ը Ն Կ Ե Ր Կ Ա Լ Յ Ա

Թարգմ. ԱՄԵՌ

A $\frac{I}{4184}$



ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ 1927

Հին և նոր կենցաղի հարցերը հուզում են մանա-
վանդ կոմսոմոլին: Վերջերս այդ դիւկուսիան ան-
դրադարձել է գեղարվեստական գրականության մեջ.
Վորպես նմուշ՝ տալիս ենք այս պատկերը, վորի մեջ
հեղինակը յուրահատուկ է լուծում սեռական հարցը:

Ընկեր Վալյան նրան գիտեր դեռ պողպո-
լիայի որերից:

Թագուն ժողովներ: Հազար տեսակի լրտես:
Ձերբակալութիւն: Հարկավոր եր զգուշ լինել:
Յե՛վ Վալյան Վասիկոյին ճանաչում եր վորպես
լավ ընկեր:

Գիտեր, վոր շատ խիզախ և լավ հռետոր ե:
Վալյան այն ժամանակ դեռ թեկնածու յեր:
Ավելի շատ սուս եր կենում ու լսում: Կարդում
եր շարունակ, սովորում: Վասիկոն նրա համար
որինակելի ընկեր եր:

Եղպես եր մի ժամանակ:

Հիմի Վալյան են չի: Կարգին հասունացել
ե, փորձառութիւնն ձեռք բերել: Քաղաքական
հարցերում խելքը բան ե կտրում:

Վալյան դառել ե ռայոնի սիրելին:

Վորտեղ ընկեր Վալյան լինի՝ ենտեղ ել տղերքը
կհավաքվեն:

Զրույց: Հանաք: Ծիծաղ:

Վալյան ելի Վասիկոյի հետ ե—միևնույն ուս-
յունում:

Ժողովներ: Ներկայացուցիչներ: Հուշ-յերեկոններ:
Նորից միասին են լինում նրանք:

Թե բանը ինչպես սկսվեց՝ Վալյան ել չիմա-
ցավ: Վասիկոն ավելի հաճախ եր գալիս նրա
մոտ: Յերբեմն, հենց ենպես աչքին երևում եր,
չնայած՝ վոչ ժողով եր լինում, վոչ պատճառ:

Առաջի որերը Վալյան դեռ եդ չեր նկատել:
Ժողովից թե ներկայացումից, յերեկոնները
միասին են գնում, մի ճանապարհով:

Տղերքն արդեն փափում էյին իրար ականջին:

— Ապա մտիկ՝ Վալյան ելի Վասիկոյի հետ ե...

— Վասիկոն լավ պոռչներ ունի...

Վալյան եդ բոլորը լսում եր: Սկզբում ուզում
եր իրեն պաշտպանի: Բան դուրս չեկավ, ավելի
էյին ծիծաղում: Հետո սովորեց: Լսում եր:

Ջահել տղերք են, դուրս են տալիս:

Վալյան սիրում եր արվեստը: Թատրոն եր
գնում: Վասիկոն նրա հետ եր լինում: Յերկու-
սով՝ ուրախ եր անցնում ժամանակը: Պատմում
էյին ու դատում տպավորությունները:

Վասիկոն լավ եր հասկանում արվեստը և դա-
տում եր նոր մարդու, մարքիստի տեսակետով—
եդ բանը դուր եր դայիս Վալյային, և նրանք
միասին էյին լինում:

Ինչպես պատահեց, մի անգամ ժողովից հետո
Վալյան գնաց Վասիկոյի մոտ: Նրան հարկավոր
եր Ենգելսը վերցնել, իսկ Վասիկոն լավ գրա-
դարան ուներ: Ինչ գիրք ասես՝ կճարվեր նրա
տանը:

Ծովեցին մի քանի փողոց, անց կացան կա-
մուրջը: Մի անկյուն ել շուռ եկան: Վասիկոն
առաջարկեց.

— Գալի՞ս ես վերը:

Վալյան աչքերը հառեց Վասիկոյին:

Չե՛... Նրա աչքերը սիրալիբ եյին, առաջվանման
հայացքը մաքուր եր, ընկերական: Նա ուզեց տղի
աչքերի խորքում գոնե մի անդուրեկան բան
գտնել: Չե՛... Խոսքը հալալ սրտով եր ասված...

— Գնանք ելի: Դա ինչ հարց ե՛...

Գրքերը քրքրելիս, Վասիկոն բարձր ձենով
տալիս եր ամեն մեկի անունը:

— «Մոնիստական հայացքի զարգացումը պատ-
մուխյան վրա...»

— Լենին — «Իմպերիալիզմ»:

— Ենգելս — «Անտի-Դյուրինգ»...

Թանկագին անուններից պսպղացին Վալյայի
աչքերը...

— Պլեխանով ել ունե՞ս... տուր, Վասիկո:

— Կարելի յե, — և Վասիկոն գիրքը պարզելիս՝
թագուն հայացք գցեց Վալյայի վրա:

— Ա՛յ, քեզ յերկու գիրք եմ տալիս, յերկու
շաբաթ ժամանակով: Մենակ լավ պահես...

— Եդ ինչ հարկադրական լեզվով ես խոսում:
Ծիծաղեց Վալյան:

— Ծիծաղի, ծիծաղի...

* * *

Վասիկոն շատ հասարակ եր նայում իրերին:
Նա ապրում եր ներկայով: Կոմսոմոլում հին
արմատի անուն ուներ: Պաղպոյլը շիկ:

— Ընտանիքի հին ձևերը պիտի քանդել: Մենք
դեմ ենք ստրուկ դրուժյան: Իսկ ընտանիքը՝
առաջվա հասկացողությամբ՝ կապանք ե տղա-
մարդու, մանավանդ կնոջ համար...

Ասում եր Վասիկոն, և նրա խոսքերը պարզ
եյին ու գեղեցիկ:

Վասիկոն այդ նյութի մասին հաճախ զրույց
եր անում ընկերների հետ: Նյութը շատ ե մեծ:
Ինչքան խոսես՝ խոսելու բան կա: Միանգամից
չես կարող բոլորը ասել: Չես ել կարող մի ընդ-
հանուր կարծիք հանել: Ամեն մեկը յուրատեսակ
ե հասկանում: Ի՞նչ արած: Նյութը շատ ե մեծ:

Մենակ մի բան պարզ ե, վոր հին ձևերը փթե

են: Նրանց ժամանակը անց ե կացել: Հարկավոր
ե հինը նորով փոխարինել: Այդ մեկը բոլորն ել
լավ եյին հասկանում:

Եղբանը միայն:

Յեվ տղերքը տաք-տաք վիճում եյին: Լսում
հափշտակուլթյամբ:

— Կինը՝ ամենից առաջ ընկեր ե ինձ համար:
Ճիշտ ե, անցած ժամանակներում, պայմանները
ենպես են յեղել, վոր կինը յետ ե մնացել
տղամարդուց, բայց ելի, չնայած դրան յես շատ
մեծ ընկերական զգացմունքով և հարգանքով եմ
մոտենամ այն կնոջ, վոր ինձ յետ, կողք կողքի,
հավասար աշխատում ե:

Եղպես եր ասում Վասիկոն ընկերներին: Բայց
ուրիշ բան ե՝ յերբ խոսում ես տղաների հետ,
իսկ յերբ խոսում ես կնոջ հետ, և նրա հետ ես
լինում՝ ուրիշ բան ե: Եղպիսի դեպքերում, Վասի-
կոն ինչքան աշխատում եր կնոջ հետ ընկեր լինել՝
չեր լինում: Նրա համար մեծ մասամբ նորից
մնում եր կինը:

Վոչինչ չեր ոգնում, վոչ ապացույց, վոչ պրո-
պագանդ...

Ի՞նչ անդիտակից բաներ են...

Իսկ ո՞վ ե մեղավորը:

Մեղավոր են հասարակական, տնտեսական փոխ-
հարաբերուլթյունները:

Տղամարդը կնկան բաժանել է կյանքից: Փակել նրան իր սեփական տանը: Դարձրել իրեն պատկանող առարկա:

Բայց Վասիկոն եղպիսի տղամարդ չեր: Նա իրեն շատ հասարակ էր պահում, և հասարակ էլ վերաբերվում էր ամենքի հետ:

Տղա թե աղջիկ՝ Վասիկոյի համար մեկ էր: Ինչ վոր սրտումը ունենար՝ կհաներ լեզվի վրա:

— Ամոթ է աչքներս փակենք՝ ենպիսի բանի առաջ՝ յերբ չես կարող կողքովս անց կենալ ու չնկատել... Բնությունը իրանն է ուզում: Եստեղ վոչինչ հանցավոր բան չկա: Հանցանքը են է, վոր ձենը կտրես: Յերբ համարում են անհարմար, իսկ իրենք թագուն-թագուն, հասցնում են մինչև անառակության — եղ է հանցանքը: Ինչը բնական է և կարգին՝ լավ է:

Յեվ յերբ Վասիկոն ու Վալյան Գուռ գետն անցան և բարձրացան բլուրը՝ նրանց խոսակցությունը սովորականի պես հասարակ էր:

— Յենթադրենք թե տղեն դուր է գալի: Դու տրվում ես նրան: Բայց են չի, ինչ վոր առաջ, յերբ կանայք տրվում եյին՝ մտքումը հաշիվ անելով, վոր կամ փող պիտի ստանան, կամ պսակվելու յեն: Հիմի ենպես չի: Տրվում ես քո ազատ կամքով, քեզ հավասար մարդու...

Ով Վասիկոյին ճանաչում էր՝ հիմի դժվար թե

հավատար, վոր խոսողը Վասիկոն է: Պոտպոլիայի
ժամանակ Վասիկոն ուրիշ տղա յեր: Լարված,
ուազմական պայմանները են ժամանակ պահան-
ջում եյին, վոր միտքն ել լիներ լարված ու
ուազմական:

— Եդ բոլորը, սիրելի ընկեր, միայն գեղե-
ցիկ խոսքեր են... դու մի մոռանա, վոր մեզա-
նից ամեն մեկը կարող է հանկարծ մայր դառ-
նալ, — առարկում եր Վալյան:

Յեվ նրա առարկությունները տեղին եյին:
Վասիկոն չեր կարող պնդել, վոր յերեխան պե-
տական լիակատար խնամքի կարժանանա:

Դեռ եդ ժամանակները չեն հասել: Իսկ հղի-
ության դեմ ամեն կին չի համաձայնվի միջոց
ձեռք առնել, մանավանդ՝ յեթե աղջիկ է: Յեվ
Վասիկոն խոսքի տակ եր մնում:

Յերբ Վալյան շատ եր հոգնել ման դալուց՝
նստեցին, և Վասիկոն շարունակում եր խոսել:

Նա խոսում եր պարզ, գեղեցիկ:

Նա նորից խոսում եր ֆիզիքական անհրա-
ժեշտությունների, սեռական ընտրության, սե-
ռական անխուսափելի պահանջի մասին, խոսում
եր եդ հարցերի նկատմամբ պարզ տեսակետ
ունենալու մասին:

Ել չեր հիշում Վալյան, թե ինչ կատարվեց. մի-
այն հետո՝ ամաչում եր նայել Վասիկոյի յերե-

սին: Բայց իր սրտում վալյան չեր մեղադրում
վոչ մեկին: Նա ինքը ցանկացել էր: Ապա՝

Գեղեցիկ բլուրները...

Ջահելությունը...

Տաք խառնվածքը...

Ջարմանալու բան չկար՝ վոր կատարվեց:

* * *

Հետագայում, վասիկոն ասում էր.

— Սարսափելի զբաղված եմ...

— Տնքում եմ գործի տակ...

Յեվ վալյան մենակ էր գնում տուն:

Ժողովից թե ներկայացումից՝ մենակ էր գնում
տուն: Վոչնչից չեր յերևում, վոր նա վիրա-
վորված լինի կամ տխուր: Վալյան ելի ենպես
կենսուրախ էր:

— Վասիկոն ասես թե սառել ե... — նկատե-
ցին տղաները:

— Հիմարություն կլինի, յեթե յես պահան-
ջեմ, վոր վասիկոն ինձ հետ մնա... Ի՞նչ իրա-
վունք ունեմ... Յես եմ ցանկացել, ինքս...

— Վասիկոն սուտ չի ասում, — հավատացնում
ու հանգստացնում էր իրեն վալյան:

Իսկ վասիկոն սուտ էր ասում: Աշխատանք
յեղած թե չեղած՝ նա շարունակ ասում էր
վալյային, վոր սաստիկ զբաղված ե:

Վասիկոն շատ եր վախենում հին ընտանիքի
կապերից...

— Մեկ ել տեսար՝ Վալյան մայր դառավ:
Մի յերկու տարուց՝ յերեխա — են ժամանակ,
կորավ ամեն բան...

— Սատանեն բռնեց, — զղջում եր Վասիկոն:
Վասիկոն թեև հին աշխատող է՝ բայց ջահել է
տակավին: Այլ կերպ չեր հասկանում կյանքը՝
քան հեղափոխական պայքար, սովորելու և ա-
ռաջ գնալու ցանկութուն: Իսկ ընտանիքը, ինչ-
պես ուզում ես հաշիվ արա՝ մարդու վոտը կա-
պում է: Ավելորդ բեռ: Ընտանիքը շալակիդ՝
չես կարող թռչել:

Եղպես եր մտածում Վասիկոն, և ընտանիքը
նրան սարսափելի յեր թվում:

Ընկեր Վալյան դադարեց դալ ժողովների:
Աշխատանքից յերկու ամսով արձակուրդ ստա-
ցավ: Վալյան մայր է դառել:

— Հետաքրքիր բան է, — մտածում եր Վա-
լյան: Գուցե անհաշող է, սգեղ՝ բայց նոր բան
է: Ավելորդ չի լինի՝ յեթե մեր տղերքը նոր
հարցով զբաղվին: Չե՞ վոր ես հարցը նոր կեն-
ցաղի հետ է կապված:

Յեվ Վալյան վորոշեց:

Նա մի թուղթ գրեց, մանրամասն պատմեց
տեղի ունեցածի մասին և խնդրեց, վոր ռայոնի

կոմիտեն հարցը քննի ընդհանուր ժողովում:

Յերկրորդ ռայոնում լավ տղերք կան: Բոլորը ջոկովի: Բանվորական ռայոն ե: Ռայոնական կոմիտեն ինչքան ուզեց հարցը թազցնել՝ չեղավ: Բոլորն իմացան: Ձենը հասավ Վասիկոյին:

Կուրը Վասիկոյին սպանեց: Հարցը բերել են ռայոնական ժողովի: Ինչ խայտառակ բան...

— Յես ի՞նչ հանցանք ունեմ... հետո ի՞նչ... հո չե՛յի ընկնի մեշչան աղջկերանց յետևից... նրա կամքով ե յեղել... ամենաշատը՝ պիտի ստիպեն վոր պսակվեմ...

Մտածում եր Վասիկոն և անհամբեր սպասում ընդհանուր ժողովին:

Ձեռը չեր բռնում բան շինի, իսկ տղաները հանաքով վրա եյին տալիս.

— Հը՛ր, ասում ես նոր կենցա՞ղ եյիր ուզում ստեղծի...

— Խրվել ե հա՛:

— Մի տես ինչ դալմադալ ենք զցելու...

Իսկ վոմանք ել՝

— Վոչի՛նչ, Վասիկո, պինդ կաց. քեզ հետ ենք: Եղպես անցավ յերեք որ: Այդ յերեք որը Վասիկոյի համար հակառակի պես յերկարում եյին, դառնում տարի: Վերջապես ուրբաթ որը հայտնագիր բերին:

Ռաշոնակասն կոմիտեն խնդրում եւ ներկա
շինել...

Վասիկոն գիտե որակարգը: Պիտի գնալ: Պիտի
ներկա լինել: Կարգապահութիւն:

* * *

Եսոր բոլորը հավաքվել են: հասկանալի յե:
Որակարգը հետաքրքրութիւն եւ առաջ բերել:

Ակումբում լսվում են ժիր ձայներ.

— Կարգացի՞ր շրջաբերականը:

— Ստուգվե՞լ ես քաղաքագիտութիւնից...

— Այո, տվի — Լենինի «Իմպերիալիզմը, վոր-
պես կապիտալիզմի նորագույն ետապը»...

— Կգամ: Ուղիղ հինգին: Անպատճառ:

Իսկական կյանք: Պարզ, առողջ կյանք:

Ինտերնացիոնալ.

Յերգում են առանձին խմբեր: Յեվ ամեն մի
խոսքը, ձայնի ամեն մի շեշտը կարծես թռչում
ե, կաշում գունատ պատերին, հետո վեր սղոս-
կում պատերով, հասնում մինչև գմբեթը:

Անլեզու աղյուսներ: Բայց ելի քեզ թվում ե,
վոր պատերից, հազար ու մի խոռոչներից կըրկ-
նվում են յերգի, հիմնի հատ ու կտոր խոսքեր:

Առաջ այդ պատերը ուրիշ տեսակի խոսքեր
եյին կրկնում, ուրիշ յերգեր ու հիմներ: Խո-

նարհաբար անտրտունջ կրկնում եյին ստրկու-
թյուն շեշտող խոսքեր: Բորբոսնում եյին պա-
տերը: Մշտական փոշին եր նստած նրանց վրա:
Հավիտենական լուսթյուն: Հավիտենական ան-
թափանցելի գիշեր:

Մարդկանց աչքերին կապ: Գլուխներում թըմ-
րեցնող հաշիշ:

Պապանձում:

Սակայն առաջ եր եղպես:

Հիմա ամեն ինչ փոթորկալի յե, հակիրճ:

Հառաջ դեպի արևը,

Մղենք խիզախ պայքար,

Սվիններով մեր անողոք

Հարթենք մեզ ճանապարհ:

Նոր մարդիկ են յեկել: Նոր խոսքերով:

— Լենին...

— Հեղափոխություն...

— Կոմունիզմ...

Խոսում են ապստամբությունների, բարիկաղ-
ների, պայքարի մասին:

Ամրանում են յերիտասարդ, ըմբոստ վո-
գիներ:

Ուժ...

Դեռ ժողովը չբացված՝ տղերքն ասում եյին.

— Եղպես, սիրելի ընկե՛ր, մենակ մեշչան

մարդը կմտածի: Վասիկոն մեղք բան չի արել: Շատ
մեծ սխալ կլինի, յեթե ստիպեն ամուսնանալ...

— Մի մոռանա, վոր Վալյան ծնել է...

— Իհարկե, բոլորս ել դեմ ենք վոր բանը
ստիպելուն հասնի, բայց չի կարելի ասել, վոր
եղպիսի վերաբերմունք մեր ժամանակի համար
նորմալ է: Շատ շուտ է դեռ:

— Ի՞նչ է նշանակում նորմալ: Հարկավոր է
ապրելու նոր յեղանակ գտնել, սիրելիս: Այ
թե բանն ինչու՞մն է:

— Ամեն բանը խառնվեց: Նոր յեղանակներ
են փնտրում... Գրականության մեջ նոր յեղա-
նակ, նկարչության մեջ՝ նորություն: Հիմի,
տղան աղջկա հետ է լինում, չի յել ուզում
հետևանքի մասին մտածել՝ ելի ասում են նոր
յեղանակ: Բան չեմ հասկանում...

— Եղ վատ է, վոր չես հասկանում: Հասկա-
նալ է հարկավոր:

Ամեն մեկը տաք-տաք պնդում էր իր տեսա-
կետը: Մի մասը ապացուցում էյին, վոր Վասի-
կոն մեղք չունի, մյուսները մեղադրում, վոր
նա վերաբերվել է թեթևամիտ:

— Եղ նոր յեղանակները, ընկե՛ր, արհեստա-
կան կերպով չես ստեղծի: Չի կարելի ասել, վոր
ուզեցիր՝ կլինի: Եղ նոր յեղանակները իրենք
կզան: Նրանց ճանապարհը կբացվի են ժամանակ,

յերբ հիմքից կոտրվեն հասարակական - տնտեսական փոխ-հարաբերությունները: Դա տասնյակ տարիների խնդիր է: Վոտից զլուխ վոր կրակ դառնաս՝ յեղանակները իսկույն չես փոխի:

Տղերքը մի շատ հետաքրքիր, նոր հարցի հանդիպեցին:

Հարցի քննությանը շատ սրտով եյին կպել:

Յերիտասարդություն: Խորը տպավորություն:

Զգայնություն:

Ժողովը ձայնեց.

— Վասիկոն յեկավ:

Վասիկոյին մոտեցան ընկերները: Հանաքներ եյին անում, սպառնում պատժել:

Ժողովը բաց արեց ընկեր Հայկը:

Ուրիշ հարցեր ել կային, բայց վրա տվին:

— Դե լավ, շո՛ւտ: Դրանց մասին հետո...

Տղաներին ուրիշ բան եր հետաքրքրում: Վալյայի դրությունը:

Հայկը փորձառություն ունի: Նա հարցը դրեց վերջին: Վոչ վոք չհակառակվեց: Չնայած բոլորը սպասում եյին հենց այդ հարցին:

— Հիմի, ընկերներ, քննենք ընկեր Վալյայի հայտնադիրը — ասաց Հայկը:

Ժողովը թարմացավ: Չայները բարձրացան:

Տեղիցը մի ձայն.

— Յես, ընկերներ, առաջարկում եմ հայտ-

նագիրը չկարդալ: Շատ ժամանակ կխլի: Մեկը
թող բերանացի ասի բանը ինչու՞մն ե...

— Ճիշտ ե:

— Չե՛, թող կարդան...

Հայկ.

— Առաջարկություն կա: Յես; ընկերներ,
քվեյարկում եմ: Ո՞վ ե ցանկանում լսել հայտ-
նագիրը:

— Մեկ, յերկու... յերեք... տասներհինգ...

— Ո՞վ ե դեմ կարդալուն...

— Աշկարա մեծամասնություն...

Հայտնագրի հետ համառոտ կերպով ծանոթա-
նալուց հետո, անցան քննությանը: Առաջինը
խոսեց նախագահը:

— Յես, ընկերներ, համենայն դեպս, վասի-
կոյին մեղավոր եմ համարում: Նա չպիտի թույլ
տար վալյայի հետ եղպես վերաբերվել: Նրա
վարմունքը յեղել ե թեթևամիտ...

Չայներ տեղերից.



— Բանը հո զուռով չի՞ յեղել...

— Արդարացնելու պատճառ չի դա:

— Սարսաղ:

Նախագահը հանգստացնում ե.

— Ամենից առաջ, ընկերներ, կարգ պահեցե՛ք:
Յես ձեզ ձայն չեմ տվել, ի՞նչ եք բողոքում:
Եղպես չի կարելի:



Նախագային սիրում են: Նրան լսեցին:

— Նախագգուշացնում եմ, ընկերներ, ով կարգը խանգարի՝ կ հեռանա ժողովից: Ով ուզում է խոսել՝ թող գրվի, թե չե բղավելով բան չենք հասկանա: Ընկերներ, հարցը ենքան ել հասարակ չի, ինչպես շատերը կարծում են:

— Խնդրում ենք, ընկեր Հայկ, խնդրում ենք...

— Լավ, ձեռն չենք հանի... խոսիր...

— Դե հիմի լսեք, ընկերներ: Ես քայլը նախատել ե հարկավոր վոչ թե նրա համար, վոր ընկերները պետք եր առաջուց գնային Զագս, կամ թե Վասիկոն պարտական եր Վալյայի հետ ամուսնանալ—այդ մասին չեմ ասում—վատը են ե, վոր Վասիկոն ես հարցում թեթևամիտ ե յեղել, վոր նրա վերաբերմունքը մեշչանական ե: Վասիկոն ենպես չի վերաբերվել, ինչ վայել ե կոմունիստին: Կոմունիստը ամեն բանում իրան հաշիվ պիտի տա, պատասխանատու լինի: Իսկ Վասիկոն արել ե ենպես՝ ինչպես քեֆը տվել ե: Դրա համար հարկավոր ե նրան նախատել:

Ընկերներից շատերը ինձ ասում եյին.

— Մենք վո՞նց կարող ենք մեր ընկերոջ անձնական կյանքի վրա խոսել: Վորպես թե, մենք կոմունիստներ ենք միայն հասարակական կյանքում, իսկ ինչ վերաբերում ե մարդու անձնական կյանքին՝ եդ իրա գործն ե...

— Եղ տեսակ կոմունիստը, ընկերներ, մի գրոշ
չարժի: Եղպես չի կարելի մտածել: Կոմունիստը
չի կարող հասարակությունից կտրված լինել: Նա
ամեն ինչը հաշվի առած պիտի լինի, պիտի լավ
հասկանա հասարակական յերևույթները և հա-
մապատասխան կերպով գործը բռնի:

— Ապա աղոթք անելը, թուղթ խաղալը, հար-
բելը—չե՞ վոր սրանք ել անձնական գործեր են...
Եղ վո՞նց ե — մենք արգիլում ենք մեր անդամնե-
րին: Ինչը վարկաբեկում ե մեր կուսակցությունն
ու միությունը, մենք դրան դեմ ենք գնալու...

Յերկար խոսում եր նախագահը: Հետո ուրիշ-
ները դուրս յեկան:

Բոլորն ել ուզում եյին խոսել: Նյութը նոր եր,
հետաքրիր:

— Ընկերներ, առաջարկություն կա մտքերի
փոխանակությունը դադարեցնել:

— Դեռ շուտ ե:

— Հերիք ե:

— Քվեարկվենք, քվեարկվենք:

— Լռություն, ընկերներ. յես քվեարկում եմ:

— Ո՞վ ե համաձայն, վոր մտքերի փոխանա-
կությունը դադարեցնենք: Մեծամասնությունը:
Մտքերի փոխանակությունը դադարեցված ե: Մի
առաջարկություն կա: Յես կարդում եմ. «առա-
ջարկել, վոր Վասիկոն վաղը և յեթ, ամսի 11-ին

Վալյայի հետ գնա դագս»:

— Ել ի՞նչ առաջարկություն կա...

— Տեղից մի ձայն.

— Ընկեր նախագահ, կարելի՞ յե:

— Ինչի՞ մասին ես խոսելու...

— Առաջարկություն ունեմ:

— Խոսիր:

— Ընկերներ, եսպիսի առաջարկություն ունեմ: Յերկուսին ել խոսեցնել, յեթե իրանք համաձայն են միասին ապրելու, են ժամանակ թող ապրեն, վոնց ուզում են: Զագսով թե առանց զագսի՝ իրանց գործն է: Իսկ յեթե մի կողմը, կամ յերկուսն ել համաձայն չեն՝ են ժամանակ հաշիվը մեկ է, բան չի դուրս գա...

— Ճիշտ է...

— Ընկերներ, ել առաջարկություն չկա՞...

— Չկա:

Քվեարկեցին: Անցավ յերկրորդ առաջարկությունը— «խոսեցնել»:

Վասիկոն հուզվում էր: Քիչ խոսեց. տղերքը մեջեմեջ ընդհատում էին:

— Թապցնելու բան չկա, ընկերներ: Իհարկե, յես ամուսնանալու միտք չունեյի...

— Ըհը՛, միտք չի ունեցել...

— Բա ի՞նչ էյիր ուզում:

— Ղոչա՛խ:

Նախագահը.

— Լռություն, ընկերներ: Փողով ե...

— Բայց անկեղծ եմ ասում, ընկերաբար, վոր
յեթե ընկեր Վալյան ինձ ասած լիներ իր մտա-
դրության մասին—յես նրանից չեյի շուռ գա...

— Եղ եր պակաս...

— «Յեթե»... — ընկերներ, քիչ անհարմար ե
եստեղ ասելը...

— Ինչ ե, քեզ խնդրե՞ր...

— Յես չեյի ցանկանում. հասկանո՞ւմ եք,
չեյի ցանկանում: Կամքի հակառակ ե յեղել եղ
բանը: Յես վախեցող չեմ, իմ պարտականու-
թյունն ե... Միայն ասում եմ, վոր յես դիտ-
մամբ չեմ արել, առաջուց նպատակ չեմ ունե-
ցել, հենց բանը եղպես դուրս յեկավ. ջահելու-
թյուն ե... մոտիկություն... և...

— Վո՞նց թե. եղպես պատճա՞ռ կլինի...

— Հարկավոր ե կամքի ուժ ունենալ, ընկեր:

— Ընկերներ, ես դալմադալի մեջ յես չեմ
կարող խոսել:

Հայկ.

— Լռություն, ընկերներ: Թույլ տվեք Վասի-
կոն խոսի: Եղպես չի կարելի:

— Լսում ենք:

— Ինչ ասեմ, ընկեր Վալյային յես հարգում
եմ և գնահատում: Պատրաստ եմ ամեն բանի...

Վասիկոն վերջին խոսքերը ասաց կտրուկ, շեշ-
տված: Նա լռեց:

Իսկ տղերքը դեռ ուզում էյին լսել Վասիկո-
յին, կարծում էյին, դեռ բոլորը չի ասել:

Խնդրեցին.

— Վերջը՝ ի՞նչ. ասա՛:

— Սպասում ենք:

— Ել ծպտուն չենք հանի:

Նախագահ.

— Ընկեր Վասիկոն ել ասելու բան չունի:
Նա իր ցանկությունը հայտնեց: Ուրեմն համա-
ձայն է զագս գնալ ընկեր Վալյայի հետ: Հիմի
տեսնենք ինչ կասի Վալյան:

— Խոսքը պատկանում է ընկեր Վալյային:

Վալյան միշտ լավ էր խոսում. տղերքը նրան
լսում էյին ուշադրությամբ:

— Ընկերներ, հերիք է ինչքան նայում են
կնոջ վրա, վորպես թե նա տղամարդու մի կցորդը
լինի: Կինը պիտի վորոշի իր վիճակը, իր դեմքը:
Իսկ կինը իր դեմքը կունենա են ժամանակ,
յեթե կյանքում ձեռք բերի անկախություն...

— Ճիշտ է:

— Գիտենք:

— Ես յերևույթին մենք չպիտի մատերի ա-
րանքով մտիկ տանք: Մեր կենցաղի ես նոր յե-
րևույթի նկատմամբ մենք պիտի մեր վերա-

բերմունքը վորեշենք, վոր հետո չընկնենք սխալ-
ների մեջ, մեր վարմունքը անգիտակցական, հի-
վանդոտ բան չլինի: Ընկեր Հայկը իրավունք
ունի, յերբ ասում է, թե կոմունիստը ամեն ին-
չը հաշվի առած պիտի լինի, պիտի պարզ իմա-
նա, թն ինչ է անում: Հենց վոր ժողովը բաց-
վեց, յես հասկացա, վոր հարցը ուրիշ կերպ է
գնում: Բայց սուս կացա, վորովհետև հետաքր-
քիր մտքեր եյին արտահայտվում: Վեճերի ըն-
թացքում յերևան յեկավ մեր դեմքը, մեր վե-
րաբերմունքը, մեր եյությունը, մի բան, վոր
արժեքավոր է թե՛ ինձ համար, թե ամբողջ ժո-
ղովի համար: Ինչ եր ասում ընկեր Սմիռնովը...

— Իբր թե զեկուցեց...

— Յես գիտեյի, վոր իմ հայտնագիրը եղպես
ել կբացատրեն: Յերևում է, վոր հին կենցաղը
մեր մեջ շատ խորն է նստած: Յեթե մեր ձեռ-
քը ընկնում է աղջկա հայտնագիր, աշխատում ենք
ոգնել նրան, և ամեն մեկը կարծում է, թե նա
պարտավոր է զիջողաբար վերաբերվել: Մտածում
են — ի՞նչ արած, կին է, պիտի պաշտպա-
նել: Ամենքը շտապում են ոգնության հաս-
նել, իսկ եղ բանը ստորացնում է թե կնոջ, և թե
նրան՝ ով եղպես է վերաբերվում: Եսորվա ժո-
ղովը հաստատում է իմ ասածը: Դուք, ընկեր-
ներ, ինձ արջի ծառայություն արիք:

— Վա...

— Ուրեմն դատարկ տեղը ժողով արինք...

— Ընկերներ, իմ ապագան — դա ամբողջ պրո-
լետարիատի ապագան է: Կամ աշխատանքի ազա-
տագրումն ու սոցիալիզմ, կամ թող ու հեռագրի
սյուն: Ել ուրիշ հոգս չկա: Իսկ ինչ վերաբե-
րում է յերեխային—յերեխան իմն է, նա ինձ
համար գլխացավանք չի: Ահա իմ պատասխանը:

Վալյայի արժաթե ձայնը զնգում էր ակում-
բում: Նրա վերջին խոսքերը թռչում էին, բար-
ձրանում ու սուզվում գմբեթի տակը: Ժողովը
լսում էր՝ սառած: Լսում էր, սպասում, վոր
ելի լսի: Վոչ մի ծպտուն...

— Ուո՛ւ... սատանան տանի...

— Պա՛... պա՛... պա՛...

— Կրակ է...

Տեղացին ծափեր:

— Կեցցե՛ս, ընկեր Վալյա...

— Կեցցե՛... դղրդում էր ակումբը:



Վալյային ձեռները վրա բարձրացրին:

— Կեցցե՛...

Ի ն ս ե ռ ն ա ց ի ո ն ա շ:

Կտրուկ. շեշտված. վորոշ:

Յրվեցին: Ազմկում էին: Վիճում:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039193

[054] 15 400.

A $\frac{I}{4184}$



М. Юрин

Товарищ Валя

На армянском яз.

Центральное Издательство Народов Союза С. С. Р.

Москва

Никольская, 10.